

ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՒ

Ամերիկահայ Ուսանողական Միութեան Գործադիր Մարմինը թելադրած ըլլալով ինձի հսկել Պոսթոնի Հանրային Գրատան մէջ սարքուած ցուցադրութեան կանոնաւորութեանը, այժմ փափաք յայտնուած է որ մէկ-երկու խօսքով դայն նկարագրեմ, զոր սիրայօժար յանձն կ'առնեմ:

Թէպէտ Հանդէսէն առաջ Հրաւէրներ ղըրկուած էին Հեղինակներու եւ ուրիշ անձերու որ մասնակցին այս ցուցադրութեան, սակայն եւ այնպէս Համեմատաբար քիչեր էին որ նիւթեր ղրկեցին մեզի: Այլու Հանդերձ ցուցադրութիւնը յաջող անցաւ, վասնզի արդէն անհնար եղած էր տարապայման մեծ տեղ մը գտնել եւ մեր ձեռք գտնուածները թէեւ քիչ բայց շատ ընտիր նմոյշներ էին: Պոսթոնի Հանրային Գրատան գեղարուեստից սրահին Հինգ ցուցափեղկերը, որ Ուսանողական Միութեան յատկացուած էին ամբողջ շաբաթի մը Համար, խիտ առ խիտ լեցուած էին:

Ցուցափեղկերուն առաջինը յատկացուած էր Հին ու Հազուադէպ գիրքերու ու ձեռագիրներու: Հոն կային լուսանկարները առաջին Հայ տպեալ գրքին եւ իր մօտիկ ազգականներուն. ամենահին Աստուածաշունչէն, Նարեկէ եւ Աղօթագիրքէ օրինակներ. ձեռագիրներ, Հին եր-

կաթագիրի նմոյշներ ու զարդանկար ձեռագրի գունազօղ նմոյշներ: Ասոնց մօտ էին տարբեր տպարաններէ գրքի նմոյշներ՝ 18 եւ 19 դարու շրջանէն:

Առանձին ցուցափեղկ մը կը պարունակէր Հայ թերթերու նմոյշներ ամեն կողմէ Հասած (ի բաց առեալ Ամերիկայէ՝ որ առանձին տեղ գրաւած էր): Պոլիսը, Կովկասը, դաւառն եւ Եւրոպան կը ներկայանային Հոն՝ այլազանութիւնով եւ մանաւանդ տպագրական տառերու մասնայատկութիւններովը: Ասոնց առընթեր էին գրքեր տպուած զանազան երկիրներու մէջ՝ ամենն ալ Հայերէն:

Երկու ցուցափեղկեր ալ կը կրէին Ամերիկահայ Մամուլի պատուները: Ամերիկահայ ծանօթ թերթեր ոչ միայն իրենց օրինակներէն ղրկած էին այլ եւ ճոխ Հաւաքածոներ իրենց տպարանի գործերէն, — գիրք, թերթ, պատկեր ևն.: Այս մասին մէջ էին նաեւ երկու խմբանկարները Ամեր. Ուս. Միութեան վերջին երկու Համագումարներուն (1910 և 1911): Հոն կը տեսնուէին նաեւ Ամերիկահայ տպագրական Հնադոյն գործերէն նմոյշներ:

Մեկուսի կը կենար էջմիածնի լուսանկար մը, որուն առընթեր էր Եւրոպայի Հայ Ուս. Միութեան Հրատարակած Հայաստանի աշխարհացոյցը:

Հազիւ թէ ցուցափեղկերը լեցուեր էին, ահա լուր կուգար թէ ուրիշ գիրքեր ալ պիտի դան, սակայն տեղ մնացած չէր: Այսպէս, ստիպուեցանք ցաւ ի սիրտ մերժել շատ մը ազնուասիրտ ազգայիններու յօժարակամ փոխ տալ ուղած գիրքերը, վասնզի այլեւս տեղ չէր մնացած, Շարաթ էր եւ կիրակի օր ուսանողները պիտի մեկնէին:

Այդ ազնիւ անձերուն՝ նաեւ անոնց որ վաղօրօք նիւթեր հասցուցին, ինչպէս նաեւ Պոսթոնի Հանրային Գրատան պաշտօնէութեան որ սենեկին գործածութենէն զատ թելադրութիւններով ու կարգ մը թանկագին գիրքերու փոխատուութեամբ օգնեցին մեզի, Ուս. Միութեան շնորհակալութիւնը կը յայտնեմ հոս հրատարակաւ:

Յուցադրութիւնը յաջող անցաւ: Տեղացի Ամերիկեան ժողովուրդը լուր առած էր թերթերէն, որոնցմէ մին՝ «Քրիսչըն Սայէնս Մօնիթօր» ցուցադրութեան երկրորդ օրն իսկ կը հրատարակէր Ամերիկահայ առաջին թերթին պատկերը՝ «Ազատութիւն»:


Ուսանողներուն այս ձեռնարկը թէ՛ նորութիւն մը եւ թէ՛ հրահանգիչ քայլ մըն էր: Ամերիկացիներ, կին թէ այր մարդ, կարծուածէն աւելի մեծ թիւով կը հետաքրքրուէին եւ տեղեկութիւն կ'ուզէին Հայ ազգին, լեզուին եւ

պատմութեան վրայ: Եթէ Ուս. Միութիւնը գրադարանին մէջ զնէր իր անդամներէն մէկ կամ երկուքը՝ որպէսզի մեկնութիւններ եւ բացատրութիւն տան օտարազգի այցելուներու, ցուցահանդէսը տեւական արդիւնք մը եւ Հայաստանի ծանօթութեան հզօր հոսանք մը պիտի յառաջ բերէր Պոսթոնի Ամերիկացիներուն մէջ:


Յուցադրութեան մօտ անցուցած ժամերս, ընդամենը շուրջ երկու օր, վրաս թողուցին սա տպաւորութիւնը թէ Ուս. Միութիւնը շիտակ քայլ մը առած եղաւ: Թելադրութիւն եղած է պաշտօնեաներուն եւ դուրսէն ալ փափաք յայտնուած որ Ուս. Միութիւնը ամեն տարի նման ցուցադրութիւն մը ընէ՝ ուր որ համագումարը տեղի ունենայ: Ոչ միայն գիրքերու այլ եւ Հայ մտքին ու հանձարին զանազան արտադրութիւններուն հաւաքոյթը շուտով շրջուն-քարոզ մը պիտի դառնայ Հայ ազգին ընտիր յատկութեանց:

Կը յուսամ թէ ինչպէս որ 1911-12 ի պաշտօնէութիւնը՝ այնպէս ալ նորընտիր դիւանը նոյն վառվռուն գործունէութիւնը ցոյց պիտի տայ, հետզհետէ առաջ տանելով Միութեան նպատակը մեծամեծ քայլերով ու շնորհաւորելի արդիւնքով:

ՏԻԳՐԱՆ Ե. ՍԻՐԱՄԱՐԳ



Հայերէն տառի Լրագիրը



1512ի ի վերեակի տպուած տառի գրքին մէկ էջը